

դառնալով հայ ժողովրդի սրեղծած հարուստ մշակութային ժառանգության մեկ մասին», - նշեց ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

Օշական վարդապետը համառոտ անդրադարձավ նաև 185-ամյա Մարդասիրական ճեմարանի պատմությանը և հայ-հնդկական դարավոր բարեկամությանը՝ ընդգծելով անցյալում Կալկաթայի կյանքում հայերի ունեցած մեծ դերն ու վաստակը:

Նամերգի ավարտին երաժշտական դպրոցի վարչական փնօրենը ներկաների անունից իր շնորհակալությունն ու հիացմունքը հայտնեց՝ շեշտելով, որ հայ երաժշտությանը նվիրված այս բացառիկ երեկոն միշտ վառ կմնա 90-ամյա դպրոցի փառեգրության մեջ:

Նամերգին ներկա էին Կալկաթայի Եկեղեցական Խորհրդի անդամները, կալկաթահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները և մեծ թվով օտարներ:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԿԱԿԱԹ-ԱՅԻ ՆԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 23-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում նշվեց Ս. Վարդանանց փոնը: Օրվա խորհրդին նվիրված հանդիսությունն սկսվեց միասնական «Տերունական աղոթքով», որից հետո ճեմարանականները կատարեցին Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաուր» շարականը, ինչպես նաև երգեցին ազգային-հայրենասիրական երգեր: Ս. Վարդանանց խորհրդի մասին բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանը: Նա ջերմորեն շնորհավորեց ճեմարանում սովորող երեք Վարդաններին՝ հորդորելով, որ իրենց կյանքում միշտ Ս. Վարդանն ու իր քաջ զինակիցները լինեն որպես փայտ օրինակներ, ինչպես նաև կրողները լինեն Վարդանանց անպարտելի ոգու: Տոնի առիթով երեք Վարդաններին փրվեցին նաև նվերներ:

«Դարերի ընթացքում մեր նախնիներն ապավինել և ներշնչվել են Ս. Վարդանանց անհաղթելի ոգու զորությամբ, կռվի դաշտ իջել նրանով՝ միշտ հաղթանակած դուրս գալով այնպեղից: Այսօր էլ այդ նույն ոգին, սիրելի՛ ճեմարանցիներ, ամենքիս մղում և պարգամում է, որ անմնացորդ սիրով նվիրվենք մեր Նայրենիքի շինությանն ու բարօրությանը, որ անսասան պահենք մեր հայրերի սուրբ հավատքը և Աստուծո հետ կնքած մեր ժողովրդի հավիտենական ուխտը», - նշեց Տիգրան սարկավազն իր խոսքում:

Քանի որ Նայ Եկեղեցու ընկալյալ ավանդույթի համաձայն Ս. Վարդանանց փոնը նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսի անվանակոչության փոնն է, ճեմարանականները երգեցին «Նայրապետական մաղթանքը»՝ խոստանալով, որ այսուհետ առավել ջանասիրությամբ ու նվիրվածությամբ պիտի սերտեն իրենց դասերը՝ դրանով իսկ ուրախացնելով Ամենայն Նայոց Նայրապետին, որի ամենօրյա ուշադրության և Նայրական հոգածության ներքո են իրենք:

Նանդիսության ավարտին ճեմարանականները մասնակցեցին փոնական ճաշին: